ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

02 դեկտեմբերի, 1995թ . **ք.Երևան**

Դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետական կուսակցության 2-րդ համագումարը, որին հրավիրված էր 90 պատգամավոր: Համագումարը միաձայն ընտրեց համագումարի նախագահություն հետևյալ կազմով՝ Աշոտ Նավասարդյան, Գագիկ Մինասյան, Գագիկ Գագյան, և հաստատեց օրակարգային հետևյալ հարցերը՝

- ***ՀՀԿ նախագահ Ա. Նավասարդյանի հաշվետու զեկուցում***
- ***ՀՀԿ ծրագրի փոփոխությունների ներկայացում, քննարկում և հաստատում***
- ***ՀՀԿ կանոնադրության փոփոխությունների ներկայացում, քննարկում և հաստատում***
- ***ՀՀԿ նախագահի ընտրություն***
  ա) թեկնածուների առաջադրում
  բ) թեկնածուների ելույթներ
- ***Ընտրությունների արդյունքների հրապարակում***
- ***ՀՀԿ նորընտիր նախագահի ելույթը***

Համագումարում ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀՇ վարչության նախագահ Տեր Հուսիկ Լազարյանը, «Մտավորական Հայաստան» կազմակերպության նախագահ Հովհաննես Թոքմաջյանը, ՍԴՀԿ փոխատենապետ Էռնեստ Սողոմոնյանը, ՌԱ(ԼԴ)Կ նախագահ Վիգեն Խաչատրյանը, Ժողովրդական կուսակցության նախագահ Պետրոս Քացախյանը: Համագումարում հայտարարությամբ հանդես եկավ Նժդեհյան Ցեղակրոն կուսակցության խորհրդի նախկին նախագահ Գևորգ Հովսեփյանը:

Հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ Կուսակցության նախագահ Ա.Նավասարդյանը:

ՀՀԿ նախագահ Աշոտ Նավասարդյանի ելույթը կուսակցության երկրորդ համագումարում

Հարգելի կուսակիցներ, պատվարժան հյուրեր

Հայաստանի Հանրապետական կուսակցության 1992 թվականի մարտի ընդհանուր ժողովից, փաստորեն, առաջին համագումարից հետո ընկած ժամանակը մեր ազգի ու պետության կյանքում եղել է քաղաքական բուռն գործընթացների, պատերազմական գործողությունների ծավալման, տնտեսական համակարգի արմատական փոփոխությունների ու լարված ընկերային վիճակի խիստ բարդ մի ժամանակաշրջան:

Մեր կուսակցությունը հաշվետու ժամանակաշրջանում, հենվելով իր գաղափարախոսության վրա, սկզբունքային դիրքորոշում է ցուցաբերել երկրում ծավալված քաղաքական գործընթացների նկատմամբ, մասնակցել դրանց, իր ավանդը բերել Հայոց պետականության կայացման գործին:

Անցած ժամանակաշրջանը եղել է կուսակցության գաղափարախոսության հստակեցման, այդ

գաղափարախոսությունը մեր ազգային մեծ մտածողների ժառանգության վրա խարսխելու և այդ դիրքերից ելնելով՝ մերօրյա խնդիրների նկատմամբ գաղափարականացված դիրքորոշումների մշակման ու արտահայտման ժամանակ:

Միաժամանակ կուսակցության գործունեությունը ուղղված է եղել գաղափարապես կայուն, ազգային բարոյականով օժտված, պայքարի արդիական քաղաքական ձևերի պահանջներին համապատասխան կուռ կազմակերպության կառուցմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Գերագույն Խորհրդում կուսակցության ներկայացուցիչը՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահը, հանդես է եկել օրենսդրական մի շարք նախաձեռնություններով, իր մասնակցությունն է բերել օրենքների մշակման, երկրում օրենսդրական դաշտի ձեւավորման գործընթացին:

1992 թվականին, երբ արցախյան ճակատում ստեղծվել էր օրհասական իրավիճակ, երբ հակառակորդը մարտական գործողություններով գրավում էր Արցախի տարածքները (ընկել էին Շահումյանն ու Մարտակերտը), իսկ Հայաստանում հասարակության մեջ ձեւավորվում էին այդ ծանր իրավիճակի նկատմամբ հաշտվողական տրամադրություններ, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը այն կազմակերպություններից էր, որոնք ձեռնարկեցին «Ազգային Դաշինքի» կազմավորումը: «Ազգային Դաշինքի» եռանդուն գործունեության արդյունքում Հայաստանի խորհրդարանը ընդունեց պատմական մի որոշում, համաձայն որի Հայաստանի համար անընդունելի է ցանկացած պայմանագիր, որով Արցախը կարող է թողնվել Ադրբեջանի կազմում: Հետագա ընթացքը, սակայն, պարզ դարձրեց, որ «Ազգային Դաշինքի» մեջ մտնող կուսակցություններից ու նրանց առաջնորդներից ոմանք իրենց առաջ դրել էին նաեւ կուսակցական ու անձնական խնդիրներ, ինչն էլ պատճառ դարձավ այդ միավորման տրոհմանը:

1993 թվականին Հայաստանի Հանրապետական կուսակցության մասնակցությամբ ստեղծվեց Քաղաքացիական Համաձայնության Սահմանադրության խորհուրդը: Խորհրդի անդամ այլ կուսակցությունների հետ մենք շոշափելի ներդրում ունեցանք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի մշակմանը: Մեր կուսակցության առաջ քաշած մի շարք դրույթներ մտան Սահմանադրության խորհրդի մշակած նախագծի մեջ, իսկ ապագայում ամրագրվեցին Հայաստանի Հանրապետության այսօր գործող Սահմանադրությունում: ԳԽ Սահմանադրական հանձնաժողովում ևս, ուր մշակվեց ՀՀ Սահմանադրության վերջնական տեքստը, ՀՀԿ-ն գործուն մասնակցություն ունեցավ:

1994 թվականի օգոստոսին կազմավորվեց «աջ» ուղղվածություն ունեցող կուսակցությունների քաղաքական խորհրդակցությունը: Այս քաղաքական խորհրդակցության սկզբնավորման օրերից Հայաստանի Հանրապետական կուսակցությունը՝ իր ընդգծված ազգային դիրքորոշումով, որոշակիորեն պայմանավորեց ձեւավորվող համագործակցության քաղաքական դեմքը: Հասարակության լայն շրջանակներում դրական վերաբերմունքը դեպի այդ համագործակցությունը պայմանավորվեց և այն հանգամանքով, որ այդտեղ էր գտնվում ազգային ազատագրական պայքարի բովով անցած ու այդ պայքարում բազում զոհեր տված Հայաստանի Հանրապետական կուսակցությունը:

Հայաստանի Հանրապետական կուսակցության մասնակցությամբ քաղաքական խորհրդակցությունների արդյունքներից մեկը եղած Ազգային Ժողովի ընտրություններում հանդես եկող վեց կուսակցությունների դաշինքի ստեղծումը 1995 թվականի հունվարին, որը հետագայում ստացավ «Հանրապետություն» ընտրական միավորում անվանումը: Մենք տարիների ընթացքում կուտակված մեր ողջ քաղաքական հեղինակությունը ի սպաս դրեցինք «Հանրապետություն» միավորման հաղթանակին: Ընտրություններում «Հանրապետություն» միավորման տարած հաղթանակում զգալի է և մեր կուսակցության դերը, փաստ, որն ընդունվում է ոչ միայն միավորման անդամ կուսակցությունների կողմից: Այսօր Ազգային Ժողովում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ներկայացված է չորս պատգամավորով (համեմատության համար հիշեցնեմ, որ Գերագույն Խորհրդում կուսակցությունն ուներ միայն մեկ պատգամավոր):

Ընտրություններից հետո ձեւավորված կառավարությունում կուսակցությունը բացարձակապես ներկայացված չէ: Առայժմ չեն արդարացել մեր սպասելիքները՝ կապված

գործադիր մարմիններում ու տնտեսության ոլորտում մեր մասնակցության հետ: Այս չլուծված խնդիրները լուրջ քննարկման առարկա պետք է դառնան առաջիկայում, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Հայաստանի Հանրապետական կուսակցության մասնակցության ռազմավարությունն ու մարտավարությունը մշակելիս:

Կուսակցության ողջ գործունեությունը խարսխված է եղել իր ծրագրի վրա, որի նոր խմբագրմամբ տեքստը այսօր ներկայացվելու է համագումարի հաստատմանը: Այս փաստաթուղթը երկարատև ու լուրջ աշխատանքի արդյունք է: Այստեղ ներկայացված են մեր մոտեցումները պետական համակարգի, տնտեսավարման, մշակույթի, կրթության վերաբերյալ: Ծրագրում ամրագրված է կուսակցության գաղափարախոսությունը, որը հիմնվում է Գարեգին Նժդեհի ու իր գաղափարակիցների կողմից մշակված Ցեղակրոն ու Տարոնական ուսմունքների վրա:

Հաշվետու ժամանակահատվածում մեծ աշխատանք է կատարվել կուսակցության գաղափարախոսության ձեւավորման առումով: Խոր ուսումնասիրության են ենթարկվել ազգային գաղափարախոսության դրսևորումները մեր պատմության վերջին հարյուրամյակի ընթացքում: Վերացվել են ժամանակի քննությանը դիմացած սկզբունքները, աշխատանք է կատարվել դրանց արդիականացման, վերաիմաստավորման, ժամանակի ոգուն համահունչ դարձնելու ուղղությամբ: Կուսակցությունը իր սուղ դրամական հնարավորությունների պայմաններում կարողացել է հասարակությանը ծանոթացնել մեր ազգային մեծ մտածողների ժառանգության հետ: Մշակվել ու իրագործվում է միջոցառումների մի ծրագիր՝ նվիրված Գարեգին Նժդեհի ծննդյան 110 և մահվան 40-ամյակներին:

Գաղափարախոսական աշխատանքների ոլորտում հատուկ նշանակություն է տրվել կենդանի խոսքով հասարակության լայն զանգվածներին մեր գաղափարական հիմնադրույթներին ծանոթացնելուն: Կազմակերպվել են ռադիո և հեռուստատեսային ելույթներ: Բանախոսություններ են կազմակերպվել ԲՈՒՀ-երում, դպրոցներում, բանակում: Կուսակցության «Հանրապետական» պաշտոնաթերթն իր էջերում մշտապես անդրադառնում է գաղափարախոսական ճակատում ծավալվող խնդիրներին, ազգային գաղափարախոսության դիրքերից վերլուծում է հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս տեղի ունեցող քաղաքական գործընթացները: Շոշափելի ավանդ ունի մեր գաղափարախոսության տարածման գործում Հայաստանի Հանրապետական կուսակցության շրջանային կազմակերպության կարգավիճակով գործող «Ցեղակրոն» երիտասարդաց դաշինքը:

Հաշվետու ժամանակահատվածում մեծ ուշադրություն է դարձվել կուսակցության կազմակերպական խնդիրներին: Կուսակցության կառուցվածքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ: Բնական է, որ այս փոփոխությունները իրենց արտահայտումը պետք է գտնեին կուսակցության կանոնադրության մեջ: Հայաստանի Հանրապետական կուսակցության կանոնադրության՝ այսօր ձեր հաստատմանը ներկայացվելիք նախագիծը մանրակրկիտ աշխատանքի արդյունք է: Մեր խորին համոզմամբ, այս կանոնադրությունը լայն հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր կուսակցականի՝ իր կարողությունների բացահայտման ու կիրառման համար:

Վերջին տարիներին ստեղծված պայմանների պատճառով կուսակցության անդամների մի մասը տեղժժափոխվեց պետության ուժային կառույցներ, ու, բնականաբար, կասեցվեց նրանց անդամակցությունը կուսակցությանը: Այդ մարդկանցից շատերն այսօր իրենց ներդրումն են բերում մեր պետության կայացմանը ու բարձր են պահում Անկախության Բանակի ու Հանրապետական կուսակցության՝ իրենց առաջին ազգային դպրոցի վարկը:

Ցավոք, եղել են նաև մարդիկ, որոնք, չկարողանալով հարմարվել քաղաքական պայքարի պահանջներին, կամ անկարող լինելով ընկալել կուսակցության գաղափարախոսական ու քաղաքական դիրքորոշումները, հեռացվել են կուսակցությունից:

Միաժամանակ, խիստ ուրախալի է, որ ստվարանում են մեր կուսակցության համակիրների շարքերը: Իսկ այդ համակիրներից շատերը ժամանակի ընթացքում դառնում են կուսակցության անդամներ: Հաշվետու ժամանակաընթացում հիմնվել են կուսակցության շրջանային նոր կազմակերպություններ:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Նժդեհյան Ցեղակրոն կուսակցությունը՝ իր խորհրդի որոշմամբ, որոշել է ինքնալուծարվել և իր անդամներին կոչ արել անդամագրվել Հայաստանի Հանրապետական կուսակցությանը:

Կուսակցության շարքերի կազմակերպական բարձր պատրաստվածության ու մարտունակության մի յուրօրինակ ցուցադրում էր Ազգային Ժողովի պատգամավորների ընտրությունների գործընթացը: Արդեն այն հանգամանքը, որ մեծամասնական ընտրական համակարգով առաջադրված կուսակցության բոլոր թեկնածուները հաղթող դուրս եկան մրցապայքարում, շատ բան է ասում:

Հարկ է առանձնահատուկ նշել, որ թեպետ մենք քաղաքական կազմակերպություն ենք, բայց, երբ վտանգ է սպառնում Հայրենիքին, կարողանում ենք կազմակերպել մարտական ջոկատներ և դրանք դնել Պաշտպանության նախարարության տրամադրության տակ: Հենց հաշվետու ժամանակահատվածում, երբ ռազմաճակատում ստեղծվել են ծանր իրավիճակներ, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը մարտական ջոկատներ է ուղարկել Գորիս, Կրասնոսելսկ և Արցախ՝ Մարտունի, Շուշի, Լաչին, Օմարի լեռնանցք: Այդ ջոկատները ազգային բանակի շարքերում մարտնչել են ու ցուցաբերել հայրենասիրության ու անձնազոհության օրինակներ:

Սիրելի կուսակիցներ, այսօր Հայաստանի Հանրապետական կուսակցությունը երկրի քաղաքական խճանկարում գրավում է իր ուրույն՝ ազգայնական կուսակցության տեղը. նա դրան հասել է տարիների տքնաջան, անձնուրաց պայքարի ու մաքառումների գնով: Մեզանից յուրաքանչյուրի սրբազան պարտքը պետք է լինի ձեռք բերածի բազմապատկումը՝ ի փառս մեր ազգի ու հայրենիքի:

* * *

Օրակարգի հաջորդ հարցի՝ ՀՀԿ ծրագրում փոփոխությունների ներկայացման համար խոսքը տրվեց Տիգրան Թորոսյանին:

Քվեարկության արդյունքում համագումարը հաստատեց ՀՀԿ Ծրագիրը:

ՀՀԿ Կանոնադրության փոփոխությունները ներկայացնելու համար խոսքը տրվեց ՀՀԿ խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանին:

Այնուհետև քվեարկության դրվեց ՀՀԿ Կանոնագիրը առաջարկված փոփոխություններով հաստատելու հարցը: Քվեարկության արդյունքում համագումարը հաստատեց ՀՀԿ Կանոնագիրը:

ՀՀԿ 2-րդ համագումարի որոշումը ՀՀԿ Ծրագրային հիմնադրույթների և կանոնադրական փոփոխությունների մասին

ՀՀԿ 2-րդ համագումարը, քննարկելով ՀՀԿ ծրագրային հիմնադրույթները և կանոնադրական փոփոխությունները,

որոշեց

Հաստատել ՀՀԿ Ծրագրային հիմնադրույթները և կանոնադրական փոփոխությունները:

* * *

Համագումարի օրակարգի առանցքային հաջորդ հարցը ՀՀԿ նախագահի ընտրությունն էր:

Համագումարն առաջարկեց ՀՀԿ նախագահի միայն մեկ թեկնածու՝ Աշոտ Նավասարդյանին: Տեղի ունեցավ ՀՀԿ նախագահի ընտրության փակ, գաղտնի քվեարկություն, որի արդյունքները հրապարակեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աշոտ Զաքարյանը:

ՀՀԿ նախագահ ընտրվեց Աշոտ Նավասարդյանը, որն իր ելույթում ներկայացրեց Կուսակցության ապագա գործունեության հիմնական ուղղությունները:

* * *

Համագումարի ընթացքում ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական ծառայության վարչության պետ, գնդապետ Գեորգի Պետրոսյանը պատերազմի մասնակցի վկայականներ հանձնեց համագումարի մի խումբ ազատամարտիկների: ՀՀԿ նախագահը շնորհավորեց ազատամարտիկներին:

Նժդեհյան Ցեղակրոն կուսակցության ղեկավարը համագումարին ներկայացրեց կուսակցության խորհրդի որոշումը՝ ինքնալուծարման և ՀՀԿ-ին անդամագրվելու մասին:

* * *

Համագումարում հարակից ելույթներով հանդես եկան Յուրի Բախշյանը / ԱԺ պատգամավոր, ՀՀԿ Շահումյանի շրջանային կազմակերպություն/, Անդրանիկ Մարգարյանը / ԱԺ պատգամավոր, ՀՀԿ խորհրդի նախագահ/, Գալուստ Սահակյանը /ԱԺ պատգամավոր, ՀՀԿ Մաշտոցի շրջանային կազմակերպություն/, Սերյոժա Ալեքսանյանը /Արմավիրի շրջանային կազմակերպություն/, Հասմիկ Դավթյանը / Շահումյանի շրջանային կազմակերպություն/, Աշոտ Զաքարյանը / Մաշտոցի շրջանային կազմակերպություն/, Վահան Մամիկոնյանը / Շենգավիթի շրջանային կազմակերպություն/, Թաթուլ Զարդարյանը /Գավառի շրջանային կազմակերպություն/, Գագիկ Բախշյանը / Գորիսի շրջանային կազմակերպություն/, Անահիտ Ժամկոչյանը / ՀՀԿ համակիր/:

Ելույթ ունեցան նաև քաղաքական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանը, գաղափարական հանձնաժողովի նախագահ Մուշև Լալայանը, տնտեսական հանձնաժողովի նախագահ Գագիկ Գագյանը:

Ելույթ ունեցողներն անվերապահ հավանության գնահատական տվեցին կուսակցության վարած քաղաքական գծին և արտահայտվեցին որդեգրած քաղաքական գծի խորացման օգտին:

ՀՀԿ 2- ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ԳԱԳՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հաշվետու ժամանակաշրջանում հանձնաժողովը կատարել է մի շարք աշխատանքներ, որոնցից առաջնահերթը կուսակցության տնտեսական ծրագրի մշակումն էր: Ձեզ եմ ներկայացնում այն կարևորագույն դրույթները, որոնք տեղ են գտել մեր տնտեսական ծրագրում: Հանձնաժողովականները բաժանվելով երկու խմբի, հնարավորություն ունեցան կուսակցության խորհրդի քննարկմանը ներկայացնելու երկու այլընտրանքային տարբերակներ: Մանրամասն քննարկումներից հետո դրանցից մեկը ընդունվեց որպես հիմք՝ իր մեջ ներառելով մյուս տարբերակներից որոշ դրույթներ: Լրամշակումներից հետո այն ներկայացվում է դրույթների տեսքով, որոնք էլ դարձան ծրագրային դրույթներ:

ՀՀԿ-ն լինելով ազգային կուսակցություն՝ չի կարող ունենալ զուտ տնտեսական գաղափարական մոտեցում: Մեր տնտեսական գաղափարի նպատակը ազգային տնտեսության համակարգի ստեղծումն է: Դրանց դրույթները պետք է բխեն ազգային գաղափարախոսությունից՝ ազգին ծառայեցնելու նպատակով: Սեփականության և այլ ձևերի հարաբերակցությունը պետք է բխի Հայաստանում տիրող այսօրվա իրավիճակից: Տնտեսության ազատականացման պարագայում մենք կողմ ենք, իհարկե, սեփականաշնորհմանը, որն իր մեջ կներառի պետական սեփականության էլեմենտ, ինչպես ընդերքը, օդային ավազանը, ջրային ռեսուրսները, ճանապարհները, ռազմաարդյունաբերական օբյեկտները: Վերը նշված ձևերում պետք է կիրառել վարձակալության հատուկ իրավաբանական կարգավիճակի շնորհում: Այս ձևերը բավականին լայն տարածում ունեն տնտեսապես զարգացած երկրներում:

Ներկայումս մեր հանրապետության մի շարք օրենքներ թույլ են տալիս նշված տարբերակի կիրառում, սակայն առ այսօր մենք բավարարվում ենք միայն պետական սեփականության ձևերի սեփականաշնորհումով:

Տվյալ ճյուղերում կարող են ստեղծվել նաև մասնավոր սեփականության ձևերի այնպիսի համակարգեր, որոնց գործունեությունը կկարգավորվի կառավարության կողմից:

Գյուղատնտեսության բնագավառում պետք է խրախուսել ագարակատիրությունը, քանի որ ագարակատիրոջ մոտ միավորված է և հողատերը, և ձեռնարկատերը, որը կապահովի բարձր արդյունավետություն և գյուղատնտեսական մթերքների ցածր գներ:

Հարկային և վարկային քաղաքականությունը պետք է լինի տարբերակված՝ արտադրության նշանակություններից ելնելով՝ ըստ տարածքի և ճյուղի:

Բնական ռեսուրսների համամասնական բախշման համար պետք է սահմանվեն հատուկ կարգեր այն ձեռնարկույթունների համար, որոնք իրենց ծախսերի մի մասը առանց փոխհատուցման դնում են հասարակության համար: Օրինակ՝ բնապահպան միջոցառումները:

Ինվեստիցիոն նպատակով պետք է կիրառվեն ամորտիզացիոն միջոցառումներ, ըստ այս ֆոնդի՝ ազատելով ուղղակի հարկերից:

Մաքսային քաղաքականությունը ևս պետք է լինի տարբերակված՝ ելնելով ներմուծվող բեռի դերից և նշանակությունից:

Հանձնաժողովն իր աշխատանքով ակտիվորեն միջամտում է ներկայումս ՀՀԿ-ում կարևորագույն՝ սեփականաշնորհման գործընթացին: Մեր վեց անդամները տարբեր ժամանակներում մասնակցել են սեփականաշնորհման և ապապետականացման

կառավարական հանձնաժողովի աշխատանքին, որի առումով տպվել են մի շարք հոդվածներ և հարցազրույցներ մամուլում:

Մեր կուսակցությունն ունի կառուցողական ուղղվածություն և հարցերին չի կարող մոտենալ՝ չանելով կոնկրետ առաջարկներ: Մենք պատրաստել ենք առաջարկությունների մի շարք, որը վերաբերվում է սեփականաշնորհման առանցքային հարցերին.

1.պետական ձեռնարկությունների գույքի գնահատման կարգը,

2.բաց բաժնետիրական ընկերությունների բաժնեբնութագրման կարգը:

Մեր մոտեցումները տնտեսական առումով չափավոր են ու հավասարակշռված: Մենք այս առումով ևս կենտրոնամետ ենք, ու պետք է ջանք ու եռանդ դնենք մեր ծրագրերը իրականացնելու համար:

Շնորհակալություն:

ՀՀԿ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի պատգամավորներ, հարգելի հյուրեր

Կուսակցության քաղաքական հանձնաժողովի գործունեության առանցքը հանդիսացել է կուսակցության ռազմավարության մշակումը և դրա հետապնդումը կյանքում:

Կուսակցության ռազմավարությունն ուղղված է եղել Հայոց ազգային պետության կերտմանը: Այս տերմինը՝ Ազգային պետություն, վերջերս շատ է օգտագործվում: Ազգային պետության մեր ընկալումները ձեւավորված են քաղաքական հանձնաժողովի կողմից և զետեղված են մեր ծրագրում, որտեղ հստակորեն ամրագրված է, թե ինչպիսի քաղաքականություն պետք է վարի Ազգային պետությունը՝ տնտեսության, մշակույթի, գիտության և ռազմական ոլորտում: Կուսակցության քաղաքական գործնեության մարտավարությունը խարսխված է եղել մեր ծրագրում ամրագրված այն հիմնարար օրենքի վրա, որ Հայաստանում գործող յուրաքանչյուր քաղաքական ուժի հետ մեր հարաբերությունների հիմքում պետք է դրվի ազգային շահերի առաջնայնության սկզբունքը, որից ելնելով մեր կուսակցությունը փնտրում է ուղիներ որևէ քաղաքական ուժի հետ այն իրականացնելու նպատակով:

Մենք հեռու ենք կոնֆլիկտներից և տվյալ խնդիրն իրականացնելու համար կարող ենք համագործակցել ՀՀ ցանկացած քաղաքական ուժի հետ, եթե այն չի հակասում մեր սկզբունքներին: Բերեմ միայն մեկ օրինակ՝ դա այն գործընթացն էր, որ բերեց «Հանրապետություն» բլոկի նախընտրական ձեւավորմանը, պատգամավորական խմբակցության ձեւավորմանը ԱԺ-ում: Երբ 1994թ-ի ամռանը ստեղծվեց աջ քաղաքական ուժերի խորհրդակցություն և քաղաքական ուժերի համար ակնհայտ դարձավ, որ այն վերաճելով՝ նախընտրական փուլում պետք է դառնա դաշինք, խորհուրդը եկավ այն միանշանակ համոզման, որ այդտեղ է ձեւավորվում այն դաշտը, որտեղ մեր կուսակցությունը առավել արդյունավետ կարող է ծառայել իր գաղափարախոսությանը համապատասխան:

Եվ այսօր, կուսակցությունը ոչ մի ջանք չի խնայել, որպեսզի միավորման միջոցով լուծի այն խնդիրները, որոնք առաջադրված են մեր ծրագրում:

Ինչպես արդեն նշեց պարոն Նավասարդյանը, միավորման հաջողություններում զգալի է մեր ավանդը: Այդպես են գնահատում ոչ միայն միավորման մեջ գտնվող, այլ նաև դրսում եղած քաղաքական ուժերն ու լայն հասարակությունը:

Երբ ձեւավորվեց խորհրդարանը, մեր կուսակցությունը ներկայացվեց չորս պատգամավորներով, սկսվեց գործադիր մարմինների ձեւավորման գործընթացը: Մենք հեռու ենք այն մտքից, որ քաղաքական դիրքորոշման միակ ոլորտը դա իշխանության մարմիններն են: Մեր խորին համոզմամբ, իշխանության գործադիր մարմինները ևս այն քաղաքական դաշտն է, ուր քաղաքական ուժերը պետք է կարողանան պաշտպանել իրենց դիրքորոշումները: Եվ ստացվում է, որ նախընտրական պլատֆորմում առաջադրված խնդիրների լուծման համար

ընտրություններից հետո ինքն իր վրա վերցրած քաղաքական ուժն ուղղակիորեն չի կարող այն իրագործել, չունենալով համապատասխան լծակներ գործադիր իշխանությունում, որը ստեղծում է պարադոքսալ վիճակ, ինչը երկար չի կարող տևել և կուսակցությունը համապատասխան քայլեր պետք է իրականացնի նման բացը վերացնելու համար:

Ավարտելով խոսքս, ուզում եմ ասել, որ այն հաջողությունը, որ ձեռք է բերել կուսակցությունը, հիմնականում պայմանավորված է եղել մեր շարքերի ամրության, բարձր գաղափարախոսական պատրաստվածության և կուսակցության ղեկավարության կողմից որդեգրված քաղաքական կուրսով:

Ներկայիս մեր հաջողությունները երաշխիքն են ապագա նվաճումների:

Շնորհակալություն:

ՀՀԿ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Անցած ժամանակաշրջանում կուսակցության գաղափարական աշխատանքը ներկայացնելու համար պետք է նշեմ, որ՝

1.կուսակցության գաղափարախոսության ամբողջացումն է,

2.քարոզչական աշխատանքի կազմակերպումը:

Կուսակցության գաղափարախոսության ամբողջացման նպատակով իրականացրել ենք մի շարք ծրագրեր

1.մշակվել են կուսակցության ծրագրի գաղափարախոսական դրույթները:

Այստեղ առաջնակարգ դեր է գրավում Ցեղակրոն և Տարոնական պատմության շարժումների ուսումնասիրությունը և գաղափարախոսությունը, դրանց գիտական վերլուծությունը, որոնք ընկած են կուսակցության գաղափարական հիմքում: Առհասարակ, մենք սկիզբ ենք դրել ազգայնական ուսմունքի մանրազնին ուսումնասիրմանը: Մշակվել են մի շարք գաղափարական մոտեցումներ Հայ եկեղեցու վերաբերյալ, օտար ցեղապաշտումների վերաբերյալ, որոնց նկատմամբ կան հստակ գնահատականներ: Ամբողջացնելով պետք է ասեմ, որ մենք նախապատվելի ենք համարում բոլոր այն ազգային արժեքները, որոնք առկա են մեր պատմության թե՛ նախաքրիստոնեական, և թե՛ ետքրիստոնեական շրջանում:

Օտար ցեղապաշտումների առումով, պետք է նշեմ, որ մեր գաղափարախոսությունը դրանց հետ ոչ մի առնչություն չունի. ո՛չ ֆաշիզմի, և ոչ էլ այլ ցեղապաշտական ուղղությունների հետ: Մեր գաղափարախոսությունը զուտ ազգայնական է՝ հիմնված մեր ազգի բարոյականի և էության վրա:

Մենք ունենք «Ազգային գաղափարախոսության ներածություն» մշակված ծրագիր, որը հնարավորություն է տվել կազմակերպել դասընթացներ որոշ ուսումնական հաստատություններում:

«Հայ զինվորի գաղափարական դասագրքի» հանձնաժողովում նույնպես ընդգրկված էին մեր կուսակիցները:

Մեր քարոզչությունն իրականացվում է հրապարակումների և «Հանրապետական» պաշտոնաթերթի միջոցով: Թերթը ունի նեղ ազգային ուղղվածություն, որով ի սկզբանե տարբերվում է ՀՀ-ում եղած մյուս բոլոր լրատվամիջոցներից:

Հրատարակչական գործում այս տարի կատարեցինք երկու կարևոր աշխատանք՝ Հայկ Ասատրյանի գրքույկի տպագրումն էր, և Գարեգին Նժդեհի 110-ամյակին նվիրված եզակի հրապարակումն էր:

Ցավոք, մեզանում կան մարդիկ, որոնք ընդունելով մեր գաղափարախոսությունը, բայց այնքան էլ լավ չտիրապետելով, չեն կարողանում տարածել այն, որը համարում եմ մեր բացերից մեկը:

Քարոզչական աշխատանքը իրականացվում է նաև կուսակցության Ցեղակրոն երիտասարդական դաշինքի միջոցով: ՀՀ հայտնի երիտասարդական կազմակերպության

շարքերում, անշուշտ աչքի է զարնում մեր երիտասարդական կառույցը, որոնց, ցավոք, պակասում է քարոզչական աշխատանքի փորձը:

Կուսակցությունն իրականացրեց մի շարք միջոցառումներ՝ նվիրված Տարոնական ոգու վերադարձին, Գ. Նժդեհին: Հոկտեմբերի 21-ին կուսակցությունը կազմակերպեց ուխտագնացություն Նժդեհի գերեզմանին: Միջոցառումների շարքը, նվիրված Նժդեհի 110-ամյակին, շարունակվում է՝ ազգային գրադարանում կկազմակերպվի նրա գրքերի ցուցահանդեսը, և հունվարի 1-ին՝ Նժդեհի ծննդյան օրը, ըստ նախնական պայմանավորվածության, կհեռարձարկվի հաղորդում ազգային հեռուստատեսությամբ:

Հետագա անելիքների առումով առաջնակի եմ համարում մեր գաղափարախոսության և Ցեղակրոնության սկզբունքների մատչելի դարձնելը հասարակության լայն զանգվածներին, որը շատ լուրջ և բարդ աշխատանք եմ համարում:

Շնորհավորում եմ մեր կուսակիցներին երկրորդ համագումարի կապակցությամբ և հույս հայտնում, որ այսուհետև կշարունակենք ծառայել մեր Ցեղին և Հայրենիքին:

ՀՀԿ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՅՈՒՐԻ ԲԱԽՇՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի հյուրեր, պատգամավորներ

Այսօր մենք հավաքվել ենք գնահատելու անցած հինգ տարիների աշխատանքը, ի մի բերելու մեր արածն ու չարածը: Պատմական առումով հինգ տարին շատ կարճ ժամանակ է:Այն լինելով անկախ կատեգորիա՝ արժեքավորվում է նրանում կատարված գործերով:

Կուսակցության ակտիվ մասնակցությունը Արցախի ազատագրական պայքարին մեր կարևորագույն հաղթանակն է:

Մեր կուսակցության մասնակցությունը հանրաքվեին նորից շատ կարևոր էր:

Հիմնադրեցինք «Հանրապետական» թերթը, որը հանրապետության մամուլի ներկապնակում իր յուրօրինակ տեղն ունի:

Մեր շարքերի համալրումն ապացուցում է, որ չնայած երկրի ծանր վիճակին, մեր գաղափարները՝ լինելով ի սկզբանե ակունքներից եկող մտքեր, հոգեհարազատ են մարդկանց և, ինչու չէ, նաև հուսադրող: Անցած 70 տարիներին այդ գաղափարների համար լուրջ և պարարտ հող չի եղել, և այս պարագայում ևս ՀՀԿ-ն իրականացնում է շատ լուրջ և կարևոր աշխատանք: Ընդ որում, ՀՀԿ-ի դռները միշտ լայն բացված են եղել բոլորի համար, գոյություն են ունեցել որոշակի չափանիշներ, որոնք միշտ մենք պահապնել ենք, որովհետև մեզ համար կարևոր է, թե մենք ինչ արժեքներ ենք ընդունում, և որդեգրվելով ՀՀԿ-ին, պետք է հոգեհարազատ լինել այդ չափանիշներին:

Ես ուզում եմ գնահատել ՀՀԿ-ի ճկուն քաղաքականությունը՝ ինչ նկատի ունեմ.

այն ծանր օրերին, երբ ընկան Շահումյանը, Մարտակերտը, ՀՀԿ-ի նախաձեռնությամբ ստեղծվեց «Ազգային դաշինք միությունը», որն իր առջև դրված խնդիրները լուծելուց հետո դադարեց գոյություն ունենալ:

Կարևորագույն փուլ էր ազգային բանակի ստեղծումը, և ՀՀԿ-ն իր ռազմավարությամբ ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ նրա կայացման գործում:

Ապա կուսակցությունը լծվեց պետության կառուցման գործին, մասնավորապես Սահմանադրության ստեղծման համար:

Կուսակցության համար սկզբունքային է, թե ում ենք մենք ծառայում՝ այսինքն ծառայու՞մ ենք Ազգին և Պետությանը: Մենք կաղապարված չենք մեր գործելակերպում և միշտ մեր առջև նպատակ ենք տեսնում: Եվ եթե մեր գործելակերպը պահանջում է դաշնակից ունենալ այս կամ այն ուժին, ինչպես նշված է մեր ծրագրում, համագործակցելու ենք նրա հետ, ում համար թանկ են այդ արժեքները, ինչի համար բարձր եմ գնահատում կուսակցության ղեկավար մարմինների ճկուն քաղաքականությունը: Եթե գնահատելու լինենք կուսակցության գործունեությունը այս կարճ ժամանակահատվածում, կարծում եմ, միանշանակ պետք է գնահատենք «բավարար»:

Մի քանի նկատառումներ մեր ապագա գործընթացի մասին:

Մենք ընտրությունների ենք գնացել «Հանրապետություն» միավորման կազմով և ունենք մեր տեղը ԱԺ-ում արդեն ոչ թե մեկ, այլ չորս պատգամավորների խմբով՝ ժողովրդի դատին ներկայացնելով մեր ծրագրային դրույթները: Մեր կուսակիցներիս պարտքը պետք է լինի գործադիր իշխանություններից պահանջել դրա իրականացումը, իհարկե, կան սուբյեկտիվ պատճառներ, որոնք հնարավորություն չեն տալիս այդ ծրագիրն ամբողջովին կատարել և այդ պետք է բացատրել ժողովրդին: ԱԺ-ում լինելն ինքնանպատակ չէ:

Մեր կուսակցության հանձնաժողովները ակտիվորեն պետք է ներգրավվեն օրենքների նախագծերի ձեւավորման աշխատանքին:

Կարևոր եմ համարում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենքի ընդունումը, որոնցով ստեղծելու ենք կառավարման նոր համակարգ:

Շնորհակալություն:

ՀՀԿ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Ես ոգևորվում եմ, որ մեր շարքերը համալրվում են, մարդիկ գալիս են ոչ թե ուժեղանալու, այլ ուժեղացնելու մեր կուսակցությունը: Ինչպես Նժդեհը կասեր. «Այն ուժեղի կուսակցություն է», ձիգ հայերի կուսակցություն:

Եվ ուզում եմ ասել, որ մեր աշխատանքը գնահատում եմ ոչ թե «բավարար», այլ հաղթանակած:

Մենք Հայոց աշխարհում ամենածեր և երիտասարդ կուսակցությունն ենք. ծեր ենք, որովհետև արմատներով կուսակցություն ենք, երիտասարդ ենք, քանզի քայլում ենք առաջ:

Սա զինվորի կուսակցություն է: Ավյուն և բոց, փառք ու պատիվ մեզ բոլորիս: